

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Տիգրան Բադոյանի կողմից Մեծավան խոշորացված համայնքի ու վարչական ղեկավարների հետ անցկացված խորհրդակցության

06.02.2018թ.

Մեծավան

Մասնակցում էին

Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ

Ս.Վարդանյան - Մեծավան համայնքի ղեկավար

Ա.Դումիկյան - Մեծավան համայնքի ղեկավարի տեղակալ, Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմ և Ձյունաշող, Պաղաղբյուր վարչական տարածքների ղեկավարները

Հիմնական օրակարգային հարցեր

1. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին
2. Բյուջեի գործընթացի ավարտի հետ կապված հարցեր
3. Համայնքներում աղբահանության կազմակերպման ու դրա մասով կատարվող հատկացումների, տնտեսվարողների հետ աղբահանության պայմանագրերի կնքման հետ կապված հարցեր:
4. Մաքուր Հայաստան ծրագրի շրջանակներում աղբակույտների եւ ճանապարհների եզրերին գոյացման աղբաթափման կանխմանն ուղղված աշխատանքների մասով
5. Համայնքներում տնտեսվարողների ու սոցիալական թիրախային խմբերի ուսումնասիրման աշխատանքների մասով
6. ՎՊԼԱ Ջուր,, ընկերության հետ պայմանագրերի կնքման խնդիրների հետ կապված
7. ՎԻՃ.վարչություն ներկայացվող տվյալների կազմմանն ու ներկայացման կարգի հետ կապված հարցեր
8. Համայնքներում առկա շենք շինությունների հաշվառման աշխատանքների մասով
9. Համայնքների կողմից ներդրումային ծրագրերի ներկայացման հետ կապված
10. Մարզպետարանի կողմից գրությունների ու շրջաբերական նամակներին ժամանակին արձագանքելու հետ կապված հարցերը
11. Զին.կոմիսարիատների հետ տարվող հաշվառման աշխատանքների մասով
12. Համայնքի ղեկավարների հաշվետվությունների պատշաճ ու հանրության ակտիվ մասնակցությամբ կազմակերպման հետ կապված հարցերը
13. Առաջին Հանրապետության ու մայիսյան հերոսամարտերի միջոցառումների կազմակերպման հետ կապված հարցերը
14. Հողերի վարձակալության պայմանագրերի կնքման եւ վարձակալական վճարների գանձման հետ կապված հարցեր
15. Համայնքների կայք էջերի հետ տարվող աշխատանքների մասին

Առաջարկվեց

1. Հատուկ ուշադրություն դարձնել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին

2. Կատարել աղբահանության վարձավճարների գանձումը , ինչպես նաև կնքել պայմանագրեր իրավաբանական անձանց հետ :

3. Կազմակերպել և անցկացնել միջոցառումներ Առաջին հանրապետության ու մայիսյան հերոսամարտերի հետ կապված:

4.Տնտեսական զարգացման պատասխանատուին հանձնարարվեց համայնքի և վարչական շրջանների տնտեսվարող սուբյեկտների ցուցակները կազմել և մինչև փետրվարի 20-ը տնտեսական զարգացման ծրագիր կազմել:

5. Սոցիալական աշխատողին հատուկ ուշադրություն դարձնել սոցիալապես անապահով ընտանիքների, հաշմանդամություն ունեցող անձանց օգնելու և աջակցելու ուղղությամբ:

Հանձնարարվեց հատուկ ուշադրություն դարձնել հողերի վարձակալության պայմանագրերի կնքման եւ վարձակալական վճարների գանձմանը, ինչպես նաև պատշաճ կերպով և ակտիվ մասնակցությամբ անցկացնել համայնքի ղեկավարի հաշվետվության անցկացումը:

Այնուհետև պարոն Բադոյանը իր գոհունակությունն արտահայտեց նաև <<Մաքուր Հայաստան>>

ծրագրի շրջանակում Մեծավան համայնքում աղբակույտեր չնկատելու հարցում:

Քննարկվեցին նաև այլ հարցեր խորհրդակցության օրակարգից:

Արձ. Հ. Քաչակույան